

Զրերող շէմի տակ յուռութներ են թաղում, դռան վերև չուրացած փուշ են առաջաձև կապում, և եթէ այս միջոցները չեն օգնում «բերող» զարձնելու, պատ են քաշում և մի ուրիշ տեղից են դուռ բաց անում:

Երբ նորապատկները եկեղեցուց տուն են վերադառնում, շէմի առաջ երկու ափսէ են դնում, որ կոտրեն, դոհեն և ապա անցնեն: Նաև քառորդ իւր թուրը խրում է դռան ճակատին և այլպէս բռնում, որ նորապատկներն անցնեն: Տղոցկանը, ինչպէս և տառմէրը, առաջին անգամ շէմից անցնելիս ծայրին սոխ անցկացրած շիշ են առնում ձեռին, և անցնելիս թիսուս թրիստոս ասում:

Երբ մի երեխայց աչքերը խաղացնում է, Աւետարան ունեցող առաջին երկու մեխ են խփում, որ դադարի խաղացնելուց, առողջանայ:

Շէմի վրայից միմեանց ձեռք չեն տալիս և բարենում, այլապէս կը կուռեն միմեանց հետ:

Տղարերի ժամանակ երեխայի ընկերքը թաղում են շէմիի մօսու:

Երբ պատկած շունը սատկում է՝ նրա զլուխը կտրում են շէմիի տակ թաղում. դա յուռութ է համարւում «չարոցի» դէմ:

ՏԱՐՄԵՐԻ ԵԿ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Երկիր.—Երա ձեւը տափարակ է, անժայր և անվերջ: Ցամաքը շրջապատուած է ջրով, որ Մեռեալ ծով կամ Ռվկիանոս է կոչւում, ուր մշտական խամար է տիրում և որի մէջ ոչ մի կենդանի չկայ, բացի մի մեծ ձկից: Այս ձուկը փաթաթուել է ցամաքին և մի թիզ է մնացել՝ որ զլուխը պոչին հասնի, երբ հասաւ՝ աշխարհը պիտի կործանուի:

Երկիրը կանգնած է եղան պողերի վրայ, երբ նա Աստծու հրամանով ցնցում է զլուխը՝ երկրաշարժ է յառաջանում:

Երկիրը երկու աշխարհներից է բաղկացած՝ լոյս և մութ: Լոյս աշխարհը երկրի վրայ է գտնուում, իսկ մութը՝ երկրի մէջ: Պատահում է, որ մարդիկ ընկնում են մութ աշխարհը, այստեղ երկու ըղոչ (խոյ) կայ՝ սև և սպիտակ, որոնք գալիս միեւնանց հետ կռւում են. եթէ մութ աշխարհ ընկածը կարողանայ «իրեն ցկել» (հեծնել) սև դոչի վրայ՝ սա նրան կտայ սպիտակին և վերջինս նրան կը հանի լուս աշխարհ: Իսկ եթէ հէնց սկզբից սպիտակի վրայ հեծնի՝ սա կը ձգէ նրան սևի վրայ և վերջինս կիշեցնէ նրան մութ աշխարհի խորքերը:

Լուս աշխարհում միշտ էլ, Աղամից առաջ մարդիկ են ե-

դեւ, Սրանք թէն մարդակերպ են եղել, սակայն անասունի պէս անլեզու և անխելքը, Սրանց միջից Աստուած ընտրել է Աղամին, խօսելու չնորմ և խելք տուելու ու դրախտում բնակեցրել.

Աղամը 50 զոյգ արու և էգ զաւակ է ունեցել, և կրտսերներին ամուսնացրել է աւագների հետ՝ ասելով. «Սա սուրբ սերմանցանութիւն է, «մեղք, անառակութիւն չէ»:

Երբ Աղամը մեղանչել է աստծու դէմ, նրան մի մորթի է տուել իւր մերկութիւնը ծածկելու, այդուղից էլ նա սովորել է շոր հագնել՝ կարելով անասունների մորթիներից:

Մի անգամ «չարը» ագռասի ձևով վերցրել է մի սատանի եղունգ (վանակատ) և մորթել մի ուրիշ ագռաւ Կայէնը այս տեսնելով ինքն էլ վերցրել է մի այդպիսի եղունգ և մորթել Արէլին: Միայն մորթելիս եղունգը փշրուել է: Այնուեւսու Կայէնը հետամուս է եղել, որ մի աւելի կարծր բան գտնի, որ կտրելիս չփշրուի, և երբ ինքը չէ կարողացել գտնել՝ աւանդ է թողել իւր որդիներին, որ նրանք գտնեն. և սրանք երկար որոնելուց յետ գտել են երկաթը: Այսպէս ուրեմն դարբինները Կայէնի սերունդի մէջ են սկիզբն առել:

Սպանուած Արէլի դիակը հողը չէ ընդունել, որքան որ փռել են և թաղել, հողը գուրս է ձգել գետնի երեսը: Այս ժամանակ Աստուած հրամայել է ընդունել և միենոյն ժամանակ օրնենել է հողը՝ ասելով. Ամէն բան քեզնից կստեղծեմ, պառուզներ, աղբիւրներ, ոսկի և այլն. ամէն ինչ քեզնից ծնունդ կառնէ և քեզ կը վերադառնայ: Այն ժամանակ հողն ընդունել է Արէլի դիակը:

Կայէնի սերնդի մէջ բազմացել են աղջիկները, իսկ Սէթի սերնդի մէջ՝ տղաները: Աղջիկները հնարել են թմրուկն ու քնարը, և նուազածութեամբ, երգով ու պարով որսացել Սէթի տղաներին: Եւ երբ չարութիւնը սրանց մէջ տարածուել է՝ Աստուած բարկացել է և ջրհեղեղ արել:

Զըսեղեղից ազատուել է միայն Նոյը, և երբ սա տնկել է խաղողի որթը, նրա տակ երեք տեսակ կաթ է լցրել, մարդու, առիւծի և շան: Այս պատճառով և դինի խմողը այս երեքից մինի առիւծի, մարդու կամ շան ընաւորութիւն է ստանում:— կմամ կատաղում, կամ լուռ նստում և կամ շարունակ հաջում:

Աշխարհը իւր զոյութիւնը պիտի շարունակէ մինչև որ Ղովտի աղի արձան դարձած կինը որդի ծնի, որը և կոչուելու է Նեռ: Այդ տարին տաղեղնակը (ծիածան) չի կապուելու: Նեռը պէտք է հրաշքներ գործէ, մարդկանց հաւատացների հանէ, և իւր հաւատացների ճակատներին իւր կնիքը խփէ, որպէսզի վերջին դատաստանի միջոցին որոշուեն: Նեռին պաշտպանելու է արքւշ-մա-

շուշների թագաւորութիւնը, սակայն շուտով մը իստոս նորից գալու է աշխարհ, կռուելու է ների հետ, նրան յաղթելու և վերջ դնելու աշխարհի գոյութեան։ Այն ժամանակ արդէն լինելու է վերջին դատաստանը, Ս. Գրիգոր Լուսաւորչի խնդիրքով Նեռի երեալուց առաջ հայոց ազգը վերջացած պիտի լինի, որպէս դի չենթարկուի նրա փորձանքներին։

Բացի մարդկանցից՝ աշխարհում բնակւում են նաև կէսը շուն, կէսը մարդ արարածներ, որոնց զուուիր շան զլիսի նման է, իսկ միւս մասերը՝ մարդու Սրանք խօսելու փոխարէն հաջում են։ Սրանք էլ մարդկանց մէս վարում են, ցանում, առնում, ծախում. ունեն քաղաքներ, իշխան, թագաւոր։

Հեռաւոր կզիներում ապրում են արուշ-մաջուշները (թղուկներ). որոնք 8 տարեկան երեխայի մեծութեան են, միայն շատ երկար միրուք ունեն, այնպէս որ քսում է զետնին։ Նեռի ծնուելին սրանց թագաւորութիւնը մի առ ժամանակ պէտք շատ գօրեցանայ։

Հեռներում, քարանձաւներում և մանաւանդ Մասիսի կողերին ապրում են հօմ զիսանի հրէշներ, որոնք չափազանց յաղթանգամ են, ծանրաքայլ և անխելք Յաճախ սրանք յափշտակում են մարդկային ցեղից սիրուն աղջիկներ և կանայք և նրանց հետ ապրում։

Այսպիսի հրէշների մէջ կան և այնպիսիները, որոնք միայն մի աշք ունեն ճակատի մէջ տեղում, Սրանք կոչւում են թափազօօց կամ քալլազօօց։ Պատմում են, թէ այսպիսի մի թափազեզի մօտ մի անգամ մի մարդ է զնացել, որին նա այրի մէջ փակել է, որպէսզի քնի, վեր կենայ և յետոյ նրան ուտէ։ Սա երկաթէ շամփուրը տաքացրել է, և խորել այս թափազեզի աչքը՝ կուրացրել։ Յետոյ իր վրայ է առել մի ոչխարի մորթի և խառնուելով ոչխարների հետ՝ մի կերպ գուրու է պրծել այրից, որի դռան առաջ թափազեզը նստած՝ մէկ մէկ շօշափում էր գուրս ելուղներին, որ բռնէ իր կուրացնողին։

Եռագ.՝ Մովերը անյատակ են և լի ձկներով, ծովային աղջիկներով, սատանաներով, ձիերով և գոմէշներով։

Մովային աղջիկները շիտընիկ հրենին են կոչւում։ սրանք չափազանց զեղեցիկ են. յաճախ սրանք կիսով չափ գուրս գալով ջրի միջից հրապուրում են նաւորդներին և մի որևէ վնաս պատճառում։

Եռագային գոմէշները սպիտակ են լինում։ Սրանցից շատ են նկատուած Սևանայ լճում, Սրանք ևս յաճախ գուրս են գալիս ծովից և մերձենում երկրի մատակների հետ՝ տալով մազանարաններ, որոնց ուները, ազին և ճակատը չալ է լինում։ Պատմում

են, մի անգամ մի նորագուզգու մատակ մի ամբողջ ամիս անհետք կորչելուց յետ՝ յանկարծ գտնուում է ծովի ափին: Ինն ամսից յետոյ այս մատակը մի սպիտակ ձագ է ծնում, որին կենդանի պահելու համար ստիպուած են լինում շարունակ ջրով լի տաշտի մէջ գնել: Եօթ օրից յետ երբ հանել են տաշտից, այլնս չէ կարողացել ապրել և սատակել է:

Երկնակամարը մի անսկիզբ և անծայր ծով է, որ կազմուել է երբ Աստուած երկրիս վրայի ջրերը բաժանել է: Նա եօթը Շղաթը (շերտ) է, և իւրաքանչիւր դաթը աւելի հաստ քան այն տարածութիւնը՝ որ գտնուում է երկրիս և երեացող երկնակամարի միջն: Երկնակամարից վերև գտնուում է Աստուծու ոսկէ թախտը, (գահը), բարձրում եօթը ափ ջուր, որից Աստուծու բարկացած միջոցին մի մի կաթիլ թափւում է նրա գլխին՝ բարկութիւնը իջեցնելու:

Արեւ եւ լուսին:—Սրանք քոյր և եղրայր են¹⁾), քոյր արեւ սաստիկ ամաչկոտ է²⁾) և վախկոտ, այս պատճառով էլ երկու պահապան ճրեշտակ ունի, որոնք նրան ցերեկը երկրի երեսով, իսկ գիշերը՝ տակով ման են ածում:

Արեգակն ու լուսինը մի մայր ունին, որը ապրում է երկնքում, աստղատանը Սա մի անգամ իւր խմորոս ձեռքով մի լաւ ապտակ է տուել լուսնի³⁾ երեսին, որի վրայ այժմ էլ նըկատելի են խմորի տեղերը: Գիշերն արեգակը «մէր է մանում», —գնում է հանգստանալու իւր մօր ծոցում:

Այժմ էլ պառաները առաւօտները ադօթելիս՝ սրբերին դիմելուց յետ՝ դառնում են արեգակն: «Ով մէրը մէր արեգակ, դու հասնիս օգնութեան» և այլն:

Յաճախ լուսնին քեռիք-են կանչում, ուրիմն և կանչողը իրեն արեառդի է համարում:

Լուսնի նորին ծնուռողը շուտ, իսկ հնացած ժամանակը՝ ուշ կսպիտակի:

Լուսնի նորը տեսնելիս փողի վրայ են անմիջապէս նայում, որ մինչև միւս նորը շարունակ փող ստանան, և կամ բաղդասոր համարուած մարդու երես են նայում, որպէս զի իրենք էլ բաղդասոր լինեն:

Երբ լուսնի շուրջը բակ է բռնում՝ ասում են, որ եղանակը խառնուելու է:

^{1, 2, 3)} Սրանց մասին պատմուած աւանդութիւնները նոյն են, ինչ որ պատմուում են Լոռում. (Տես Ազգ. Հանդ. X գ. եր. 198—9).

Ըստուրիք.—Արանցից ամեն մինը մի մարդու է պատկանում: Եթէ վերջինս արդար է լինում՝ աստղը պայծառ է փայլում, իսկ եթէ մեզաւոր՝ խաւար:

Աստղերը պէտք է իրար բռննն, իրար դուր գան, որպէսզի սրանց մարդիկն էլ միմևանց բռննն, միմեանց դիւր գան:

Բարի աստղի տակ ծնուածը բարի է լինում, չարի տակ ծնուածը՝ չարի Միհնոյն աստղի տակ ծնուածները միմեանց նըման և միմեանց սիրող են լինում, այստեղից էլ յառաջացել է ոՄի աստղի տակ են ծնուելք դարձուածքը, որ նշանակում է միմեանց նման են և միմեանց սիրում են:

Երբ մարդը մենաւում է՝ նրա աստղը երկնքից վայր է ընկնում, իսկ երբ ծնուում է՝ Աստուած նրա համար նոր աստղ է ստեղծում:

Ոմանը էլ ասում են, թէ աստղերը բըլովներ (բողոք) են: Երբ երկնքից թափուում են երկիր՝ սպէծելք են կոչում, և շարունակում երկրի վրայ էլ լոյս տալ: Սրանց սպանելը մեղք է համարւում:

Քարվան-դուան աստղն այսպէս է կոչում, որովհետև շատ անգամ նրան լուսոյ աստղի տեղ ընդունելով կարաւանը ճանապարհ է ընկնում և առաւտեան ցրտից սառչում կամ մթութիւնից մոլորւում:

Յարդ-զոյի ճանապարհին ասնամօթ դարմանի ճանապարհ են կոչում, և պատմում են, որ սանամայրը քաւորի դարմանից գողացել է և տանելիս ծակ փեշից թափուելով հետք թողել երկնքի վրայ:

Դիսաւոր տատղին կոչում են և պատմատու. կամ պոչով աստղը և հաւատում են, որ սա երևալիս համաճարակ, սով, սրածութիւն է լինելու:

Եյածունը երեւալիս ասում են և անդինակի է կասպելու: Սա Աստծու գոտին է, որի տակից անցնողը՝ սեռը կը փօխէ, տղան աղջիկ, աղջիկը՝ տղայ կը դառնայ:

Երբ ծիսածանը կրկնակի է լինում, ասում են. պայծառը հայինն է, խաւարը՝ թուրքինը:

Միածանը տեսնելիս խաչակնքւում են և ուրախանում, հաւատալով, որ այդ նշան է, որ Աստծու սիրտը մարդկանց վրայ քաղցրացել է, նրա ողորմութիւնը հասել, ուստի և ասում են: Օրհնեալ ես Աստուած և կամ ինչպէս Լոռում:

Կանաչ ու կարմիրը իմ ախաօր զլիսին,

Աևն ու սպիտակը՝ թուրքի զլիսին:

Ամպերը սունկերի նման բաներ են, կամ բամբակի քիլաներ (բուլաներ), Սրանք իջնում են ծովի վրայ՝ ջուր խմում և ապա

բարձրանում և անձրևում: Ամպը առաջին անգամին գոռալիս սխտորը փշանում է:

Եթէ ամպի առաջին գոռոցը փետրուարին լինի՝ այդ տարին բերքը շատ սակաւ է լինելու, իսկ եթէ մարտին՝ շատ առատ:

Եղիականին, այսինքն Եղիա մարգարեկի տօնին հկած անձրևի ամեն մի կաթիլը մի մի մարգարիտ է. ծովերի երեսին փոքրիկ արկղիկներ կան, դրանք բացւում են, և լցում այդ մարգարիտ անձրևի կաթիլներով և խորասուզում ծովի մէջ: Ջկնորսները հանում են և առանց բաց անելու վաճառում:

Եթէ Եղիականին յորդ անձրև գայ՝ բերքը շատ առատ կը լինի:

Երաշող աստուածային պատիժ են համարում, իրենց մեղքերի համար տրուած, ուստի և հոտարակական մատաղ են անում, Սեանի կամ Նորադուզի Ս. Նշանը բերելով թափոր՝ են կատարում, եկեղեցիներում հսկում անում:

Բացի սրանից երեխաները խուշկուբուրիկ են շինում, այսինքն մի ցախաւելի վրայ շորեր են գցում, ծայրին մի փափախ ծածկում, մի փայտ էլ զիսի մօտից հորիզոնական ձևով անց կացնում, որ թերե ձևացնի և ապա այս թերեից բռնած ման են ածում դռնէզուռ և երգում:

Խուշկուբուրիկն էկեր ա,
Շալէ շապիկ խագեր ա,
Զովէ գօտիկ կապեր ա,
Երկնքուց ցող ա ուզում,
Գետնից պտուղ ա ուզում,
Եղ բերէք՝ պորտին քսննք,
Զու բերէք՝ թաթին դնենք:

Տանեցիները դուրս են բերում մի ամանով ջուր և խուշկուբուրուկի զիսին, մասամբ էլ նրան ման ածող երեխաների վրայ են ածում: Ապա երեխաներին, ձռւ և իւղ են տալիս, որ տանեն ձռւածեղ անեն՝ ուտեն գուարճանան:

Նաև չորս կամ հինգ որբ և այրի կամ ամուլ կանայք լժուում են արօրին, ու տղամարդու շորեր հագած մի ուրիշ կին մածկալի առաջնորդութեամբ գրեթէ չորացած գետակը վարում:

Աւելի յաճախ մի շանհաւատին, այսինքն ոչ քրիստոնէի հին կամ նոր գերհզմանը գիշերով ծածկաբար բաց են անում, զանգը վերցնում, տանում զետում եօթին անգամ լուանում, և ապա բերում կրկին իւր տեղը դնում:

Դիւղացիները սիրով նպաստում էին ինձ՝ պեղումներ կա-

տարելու, որովհետև հաւատում էին, որ կռապաշտի գերեզմաններ բանալով՝ անձրեւ էի տեղացնում:

Ումանք էլ էն լողացնում գետի մէջ, որ անձրեւ զայ:

Երբեմն էլ երաշտը յառաջանում է նրանից, որ հացատէր մարդիկ կամենալով իրենց հացը թանգ գնով վաճառել՝ երկինքը կտպել են տալիս, որ բերքը ոչնչանայ:

Սրանք գրրացներին «գիր» են անել տալիս, որը էգ օձի արինով գրում է ործ ոձի գլխին:

Կամ խմորից երեխայ են շինում և խանձարաբում, զնում օրորոցի մէջ և մի անգիտակ մարդ վարձում, որ ամբողջ օրը անդադար օրօրէ: Եթէ առ մինչև երեկոյ օրօրում է՝ երկինքը կապւում է, իսկ եթէ հետաքրքրում է, թէ ինչու են լաց չլինող երեխային այսքան երկար օրօրել տալիս և բաց է անում խանձարուը երեխային տեսնելու դիւթը քանդուում է:

Երկինք կապողներից ճարտարագոյնները մի անտեսանելի էշ են շինում, որը զուրով սար ու ձոր շրջում է: Սա քանի զըսում է՝ երկինքը կապւում է: Մարդիկ լսում են սրա զուցը, բայց իրեն չեն տեսնում: Սակայն նա, ով երկմոց (սիրի-սիրի բոյսի տերեւը) ունի ձեռքում, տեսնում է իշխան, նրան ջարդ ու փշուր անում և այսպիսով բաց անում երկինքը:

Կարկուտ. — Կարկուտի պատճառած վնասներից աղատ մնալու համար ոչ թէ ուրիշ զաւաների նման Զատկից մինչև վարդագառ առէն երկուշարթի, այլ միայն մի օր, Ա. Թաղէոս առաքեալի տօնին, կարկուտի կիրակի են պահում:

Իսկ կարկուտ եկած միջոցին դիմում են հետևեալ միջոցների կարկուտը կտրելու:

- 1) Շրագներ են վառում:
- 2) Խաչերկաթը ¹⁾ գուրս են ձգում:
- 3) Եկեղեցու զանգակները զարնում են:
- 4) Առջնիկ տղաները կարկուտի մի հատիկ զնում են տան շէմքի վրայ և զանակով կտրում:

ՈԳԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ա. Բարի ոգիներ

Ցան դէլվաթ. — Սա մի ոգի է, որ անտեսանելի կերպով ապամում է տան մի որեւ անկիւնում, երբեմն էլ երնում տան տէրին օձի, մկան, մարդու, իշի և այլ կերպարանքով:

¹⁾ Թոնրի վրայ դրուող խաչաձեւ երկաթ: